



40 ԳԻՅ.

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

40 ԳԻՅ.

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Երգիծարանական

ՏՆՕՐԵՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՕՔՄԵՃԵԱՆ

Հասցէ, Ղալաթիա Նորատունկեան խան

Ժ.Բ. Տարի Թիւ 40

ՇԱԲԱԹ

40 Ապրիլ, 1899

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԽԵԼԱՑԻ ՄԱՐԴ ՄԸ ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Երիտասարդ մը՝ որ վերջնապէս ամուսնանալ որոճած է, կը փնտռէ խելացի մարդ մը՝ զինքը իր այդ գաղափարէն ետ կեցնելու համար :

Դիմել «Ծաղիկ» խմբագրութեան :

Ի Ռ Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ.—Օրուան վիճակաւորները:
 ԻՐԱԶԵԿԸ.—Երկու սխալներ—Գեղարդ Թէ խաչ:
 Ն.—Միջազգային կապուածիւնը.—Ձեռնկէցուածիւն :
 Գ. Փ.—Ծոյլի մը խրատականը:
 ՁԵՂԵՆԹՈՍ.—Պէտահավածիւնները:
 Վ. ՓԱՓԱՆ.—Նոր . . .
 ԿԱԿԱՍ.—ատկերներ—Աւագ օրեր դատարկ քսակներ:
 ԱԶՄՕՏԷ.—Դարձեալ Մաքրիգիւղէն — Ազմուէն ի՞նչ կ'ըսէ:
 ԽԱՌՆ.—Նկարներ:
 Վ. Փ.—Մոմով կը փնտռուի:
 ԵՍ.—Ձեմ գարնանար:
 Ծաղիկի նեղագիրները :
 Ազգային լուրեր:

ՕՐՈՐԱՆ ԳՐԱԿԱՆՈՐՆԵՐԸ

Օրուան վիճակաւորները կամ հախախտան որ և է պաշտօն ընդունողները հետզհետէ փութացն իրենց պաշտօնատեղիները :

Բայց այս վիճակաւորներուն մէջ առաջնակարգ տեղը կը բռնէ Յոնիականը, ոչ միայն իր վերադասած պաշտօնին բազմակողմանի քննադատական կողմերովը, այլ և իր գերազանց առաւել

լուծիւններովը և դրական արժանիքովը :

Տ. Մեղքեղեկ արքեպիսկոպոս, մետառանձամեայ արդիւնաւոր առաջնորդութեան մը շնորհ լողորելէ ետքը հարկ զգաց հրաժարիլ այդ պաշտօնէն և 1888 յունվար ամսոյն մէջ մայրաքաղաքս եկաւ. տակաւին Մարմարայի ծովուն վրայ էր, երբ էրդրումէն Առաջնորդ ընտրուեցաւ միաձայն քուէով և չընդունեցաւ, յետոյ Տրտապիղնի և Տիարապիլիի գաւառական ժողովներու կողմէ միանոյն պատուով առաջնորդութեան կոչուեցաւ և առնեց մէջ հրաժարեցաւ: Ն. Սրբազնութիւն որոշած էր պահ մը կողմանալ ի Գըղը-Թօփրաք Գալուստ աղայի ամարանոցին մէջ, դրական երկերով զբաղելու համար, սակայն հանդարտ չի թողուցին զինքը իր առանձնարանին մէջ:

Մայրաքաղաքիս զանազան թաղերէ շարունակ քարոզութեան համար յատուկ հրաւերներ կ'ընդունէր, որոնց անտրտունջ կը պատասխանէր և կը կատարէր իր աւետարանական պաշտօնը: Այդ միջոցներուն մէջ, երբ Պատրիարքարանէն ինչ ինչ առարկութիւններ եղան իրեն, հաշտուող պատասխան մը դրեց, որուն պահէնը Աւել Մամուլի մէջ իր յաւելումով հրատարակուեցաւ ժամանակին:

Օրուան փոթորիկը անցաւ, Ազգ. վարչութիւնը վերականգնուեցաւ, և յայնժամ Գաղղիլի ժողովուրդին կողմէ քարոզութեան խնդրուեցաւ, որ չմերժեց յիշել իր զբաղման հարախայրիքներէն՝ Խաչ-Օգնեալ խան պատուով քննադատութիւնը, որ աշխարհականութեան ժամանակ դրած էր Գաղղիլի, մ. թագաւոր եկեղեցւոյն գէմը գանուած

պանդոկին մէջ, երբ իր միտքն ու երեւակայութիւն խաշին յառած և սեւեռած, զմայլանաց և սքանչացման ժամեր կը հօլովէր,

Գատըգիւղի քարոզչութեան ժամանակ թէ՛ Կիլիկիոյ կաթողիկոսական և թէ՛ Կ. Պոլսոյ պատրիարքական ընտրելիութենէ խոյս տուաւ հաւառակ իրեն հղած կրկնակի առաջարկներու, հրաժարեցաւ կեդրոնական կրօնական ժողովոյ անդամակցութենէ, սակայն առոնց փոխարէն՝ սիրով ընդունեցաւ Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանի կրօնագիտութեան դասախօսութիւնը, ինչպէս նաև Գատըգիւղի Արամեան երկսեռ վարժարանաց բարոյական և եկեղեցական պատմութեան դասաւանդութիւնները։ Այդ ժամանակամիջոցին մէջ ունեցաւ նաև երկասիրութիւններ, հրատարակեց՝ ծանուցեալ կոնգրէսին հռչակաւոր Պասասխանը, Երկու խօսք, Մէկ խօսք՝ օրուան հարցին պատճառաւ։ Հոլուական Աստուածաբանութիւնը, Նամականին, Պետրոս Շաւեանցի Կենսագրութիւնը, Քրիստոնէական եկեղեցւոյ Պատմութիւնը՝ որ դեռ կարգաւոր բաղդը չունեցանք, Ազգ. Երաժշտութեան վրայ ուսումնասիրութիւն մը, և ուրիշ մէկ քանի յօդուածներ, բանաստեղծութիւններ և զանազան կարեւոր նամակներ ։

Եւ երբ այս գնահատելի աշխատութիւններէն կ'ուզէր քիչ մը շունչ ու հանգիստ առնել, ահա՛ Իզմիրի ժողովուրդին միահամուռ ձայնը և դաւառական ժողովին մեծարարաւ քուէն՝ վերստին կոչեցին զինքը իր նախկին պրակեալ վիճակը։

Տ. Մեղքիսեղեկ Սրբազան որ զխաչէր թէ բաղմունքեան ձայնը՝ նախախնամութեան ձայնն է յարգեց այդ ձայնը, և համակերպեցաւ ժողովուրդին սրտազին բաղձանաց, և անցաւ մեծ հանգիստաւորութեամբ իր առաջնորդական աթոռը, առանց կարեւորութիւն տալու։ Հորոյական վարկապարագի խճճանաց, ու Ամենապատիւ և Գերապատիւ մակդիրներուն շուրջը սփռուած՝ կեղծ գիմակներուն յարուցած վիվրէկներուն ։

* * *

Վանայ այցելու հովիւ Սրբազանը գեռ վտարէն դուրս չեւած^(*), Լիմնապատը կապուեցաւ Կոտայ Անապատի վանահայրութեան հետ, յանձին խոստովեան Յովսեփ եպիսկոպոսի, որուն

(*) Ծ. Խ. — Յայտը ճամբայ կ'ելլայ ։

ծանօթացած եմ 1892ի ուղեւորութեանս միջոցին։

Եկեղեցական մը՝ որ ցարդ Կոտայը չկրցաւ կառավարել, ինչպէս անոր յանձնուեցաւ նաև Լիմը, որու թեմին կը վերաբեւին՝ Ս. Էջմիածին-Ս. Սահակ-Պարթեւ, Բնձայից Ս. Աստուածածին ըստած վանքերը, ինչպէս նաև Կալաշուխ, Ճանիկ, Նորշէն, Աւէր, Խըժիշկ, Ամուկ, Նորովանց, Էրէրին, Քօղանի, Կէօզլիւ, Գոմա, Բերկաբիւ, Սորսորատ, Շահկէրտի, Տառապէկ, և Բասհայաքնակ գիւղերը։

* * *

Տ. Փառէն վարդապետին ալ Աստուած սէլամեր տայ։ Սղերդ կը զրկուի այս պահուս^(*) այդ դպրեւանքին, որ ապաքէն համեստ եկեղեցական մըն է բառին իրական նշանակութեամբը։ Երբ քրդախօս ժողովուրդ մը՝ իր լեզուէն հասկցող հրաշագործ Մկրտիչ Սրբազանը տեսեր է, Խիզանցի Յակոբ եպիսկոպոսը վայելեր է, հեազհեաէ՝ Նէվրուշեան Յովհաննէս վարդապետը, Շատախցի Ղազար, Քէօտէ-Ղազար, Մարգուանցի Աղանեան Յակոբ, Ճօմանցի Գրիգոր վարդապետները ճանչցած է։ Տէր Սարգիսեանց Արիստակէս և Կիրոյեան Խորէն բաղդակից վարդապետները լսեր է, Կալօկեցի Պետրոս վարդապետի և Սղերդցի Մարտիրոս վարդապետի գահըը քաշեր է, և ուրկէ Տիվրիկեան Թէոդորոս վարդապետ՝ գեռ քանի մը օր առաջ գիշերանց վախչելով շունչը Մարգուան առեր և Պատրիարքարանի հրաւերով մոյրաքաղաքս եկեր է ։ Կը զարմանամ թէ ինչպէս պիտի կրնայ իրեն և համբերել, մանաւանդ Տ. Փառէն վարդապետի պէս նեղ սիրտ վարդապետ մը։

* * *

Հապա ինչ ըսենք Տ. Բարթոլոմէոս Պաղճեան Ծ. վարդապետին, որ Բալու, Չմշկածագ, Չարանճագ, Մուշ, Բաղէշ, Երզնկա և Ռոտոսդոյ՝ երկար ու կարճ ժամանակամիջոցներ պաշտօնավարելէ ետքը, հազիւ մոլայ մը տուած էր Պոլիս, և Ղալաթիոյ Ս. Լուսաւորչայ եկեղեցւոյն խըցիկը կծկուած, և որուն պաշտօն տրուեցաւ Թիլիպէ երթալ շուտափոյթ, որպէս զի երկփեղկեալ կուսակցութիւնները հաշտեցնէ, և մեքապօլսութեան խնդիրը լուծէ, ուր այս միջոցիս տեղական իշխա-

(*) Ծ. Խ. — Այս պահուս հոն հասած ըլլալը հեռազրուած է Պատրիարքարան։

նութեան կողմէ կը յուզուի՝ տարեկան պատկառելի գումար մը յատկացուելով Պուլկարիոյ յատուկ ։ առաջնորդութիւն մը հաստատուելու համար։

* * *

Ս. Երուսաղիմայ միաբան Տ. Եղնիկ վարդապետ Պապայեան՝ դեռ ոտքին վերքը չբուժած, Գաղատիա պիտի ղրկուի։ Այդ վիճակը առաջուց ի վեր պէլալը վիճակ մըն է։ Քէֆսիդեան Մըկըրտի Սրբազանէն սկսեալ Դերձակեան Արիտակէս եպիսկոպոսն ալ ժառանգած է այդ վիճակը։ Սակաւն որչափ կը յիշենք, Մամիկոնեան Աբրահամ եպիսկոպոսը իր Երուսաղեմայ միաբանութեանը մէջ վաստակած դժբաղմունքները՝ այդ քաղաքին մէջ հոտոցուց, լմնցուց։ Ռուսոնքիւն Վէորդ վարդապետ երեք օր միայն կըցաւ համբերել ու կծիկը դրաւ, եկաւ Պոլիս։ Բագրատունի Կարապետ վարդապետ՝ անօթութեանէն մեռաւ, ըսուեցաւ Տ. Վահրիճ վարդապետ՝ քիչ մը աւելի տակաց։ Իսկ ամէնէն վերջէն, Տ. Տաճատ վարդապետ՝ որբանոց, վանք և վիճակ հովուելով և հոյովելով, հուսկ ուրեմն ելեալ գայցեսին հըպատակեցաւ, և չողեպինդ վստիոր հասաւ։ Հիմայ ինքը՝ փոխանակ դատուելու, դատարանը հանդիսացած է այս պահուս և Այդ. Կեդր. վարչութեան 9000 զըշէն աւելի պահանջը մը կը ներկայացնէ Գաղատիոյ Առաջնորդարանի սնտուկէն գանձելի։

Ձենք զիտեր թէ՛ այս հովուական նախափորձը՝ նորընտիր Տ. Եղնիկ վարդապետի համար օգտակար պիտի ըլլայ, թէ Բեթղէմի և Յուսիպի Տեսչութեանց և մատակարարութեանց երասնելի օրերը պիտի յիշեցնէ։

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Մնացեալ մասը յաջորդ թիւով

ՏՊԱՐԱՆ Կ. ՊԻՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Զիւնայիւլիս խան քիւ 18

Տպագրական ամէն տեսակ գործեր վուրթով և խնամքով կը կատարուին։ Զաւիաւոր գին։

Գաւառներէ յանձնարարութիւնք պէտք է ուղղուին թերթիս Տնօրէնութեան։

ԵՐԿՈՒ ՍԻԱԼՆԵՐ

ԳԵՂԱՐԴ ԹԻ ԻԱՏ

Վանէն կը գրեն մեզ.

«Ծառէկ շարաթաթերթիդ 30րդ թիւին մէջ, «Աւանդութիւնք վանքերու եւ եկեղեցեաց շուրջը» խորագրով յօդուած մը կար հրատարակուած Այվազեան էֆի ստորագրութեամբ, որուն վերջին մասին մէջ սըսըրգած երկու սխալները ուղղել պարտք կը համարիմ։ Իմ առած ճիշտ տեղեկութիւններու համաձայն, այրի հայուն հոյ մօտը գտնուած սրբութիւնը ո՛չ թէ Ս. Գեղարդն է, ինչպէս կը յիշէ Այվազեան էֆի, այլ խաչ մը՝ նոյնքան թանկագին եւ վաստակաւոր ժողովրդեան գուրգուրանքին ու ջերմ հաւատքին առարկայ՝ որքան է Ս. Գեղարդը։ Մենք Ս. Գեղարդը կ'ընդունինք կտոր մը այն նիզակի ծայրին, որ Քրիստոսի կողմ մտած է, եւ որ առթիւ մը Վան բերուած էր ու կը մնայ ցարդ Արարուց Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ։ Արդէն անցեալ տարի 4-5 անձէ խնամակալութիւն մը կազմուեցաւ, որուն պարտաւորութիւնն էր նիւթական միջոցներ ստեղծելով Հոգւոց վանքը բնակելի դարձնել։ այդ նպատակով արդէն Կոտուց անապատի սարկաւազներէն մէկը 4 ամիս առաջ վարդապետ ձեռնադրեցին, որպէս զի գարնան վանքը նորագուելէ վերջը նորընտիր վանահայրը հոն փոխադրուի իր հետ ունենալով Ս. Գեղարդը։

Իսկ վերոյիշեալ Ս. Խաչը մասնաւորապէս մեծ յարգ ունի անո՛ր համար, որ մէջտեղի խաչածեւ ապակիին տակը կը գտնուին խաչափայտի Ս. կտորներ, որոնց պատճառով եթէ Գեղարդ անունը չիլը տրուի անոր քսակիք չունիմ, որովհետեւ ուրիշ տեղեր գտնուած այդ տեսակ խաչերու գեղարդ անուանուիլը սովորական բան է դարձեր գրեթէ։ Այս խաչն ալ մին է այն սողապին թանկագին սրբութիւններէն, որոնք մեր բարեպաշտ նախնիքներէն եկած հասած են մեզ՝ նուիրագործուելով ու սրբագործուելով։


Այդ խաչը գնել ուղուեցաւ բաւական կըրկի գումարով մը, սակայն աղգային նախանձախնդրութիւնը արգելք մը դրած է ցարդ այդ վաճառումին վրայ։ Երանի՛ թէ աղգային ձեռնհաս մարմինը կամ անձնաւորութիւններ որոնք այդ տեսակ սրբութիւնները փրկելու պարտաւոր են ու միջոց ալ ունին, իրենց կոպէն քաշեն ալ միացնէին ու արժանաւոր հասուցմամբ մը գնէին զայն ու Հոգւոց վանքին նուիրէին։ Բայց, դժբաղդար, կը կասկածիմ թէ մի գուցէ մեր սովորական անտարբերութեամբ խաչն ալ օտարներու ձեռքը անցնի, որոնք վերջերս մահաւանդ, շատ հետամուտ են դընելու զայն, քանի որ այրին՝ որուն քովը կը գտնուի խաչը, զանազան իրաւացի նկատումներով ու նիւթական նեղութիւններէ բռնադատուած, պիտի զիջան Վերջապէս օտարներուն յանձնել։ Ո՛ր են մեր մեծ խօսող աղաները, Վերջին զղջումը անօգուտ չըլլա՞ր արդեօք։

Երկրորդ անգամ : Մատթէոս վարդապետը վախճանեցաւ 1894ի վերջերը , ո՛չ թէ իր ծննդավայր Կարճկան գաւառակին մէջ , այլ Հայոց Զորի Կղզի գիւղին մէջ եւ յանկարծական կերպով , երբ Հոգւոց վանքէն Վան կուգար : Իր հետ գտնուող աղա մը նոյն գիւղերն իսկ հանգուցելոյն վրայի գրամմները , խաչերը եւ Հոգւոց վանքն ու Կարճկան գտնուած արկղերու բանալիները կ'անյայտօցնէ , կ'ըսուի . . .

Ահա՛ բուն իրողութիւնը , որուն կարծեմ տեղւոյս նախկին առաջն. տեղապահ Տ. Սահակ Ծ. վարդապետն ալ բաւական տեղեակ է :

ԻՐԱԶԵԿԸ

Վան 8 մարտ 1899



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ձ Է Ն Ը Ն Կ Է Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ղատինական հին առած մը կ'ըսէ «Եթէ կ'ուզես խաղաղութիւն , պատրաստուէ պատերազմի» :

Այսպէս ալ երբ մէկ կողմէ Ռուսիոյ Զարին գէնընկէցութեան ծրագիրը իրականութեան ձեւ մը առնելու վրայ է , միւս կողմէ բոլոր տէրութիւնները որ ըստ օրէ կ'աւելցնեն իրենց սպառազինութիւնները : Ինչ որ ըլլայ , սա ստոյգ է թէ գէնընկէցութեան դեսպանաժողովի նիստը տեղի պիտի ունենայ մայիս 18ին Հոլանտայի սիւրտն ու խաղաղ Մայրաքաղաքին՝ Լահէյի մէջ , որ պիտի տեսէ միայն վեց շաբաթ :

Դեսպանաժողովը պիտի գումարուի Ընդհանուր Ժողովի պալատին մէջ եւ մանկամարդ Վիլհելմինա թագուհին որ ընդհանրապէս գարունն ու ամառ , քաղաքին մօտ դղեակի մը մէջ կ'անցնէր , Լահէյի ամբողջ դեսպանաժողովի գումարման ժամանակամիջոցին մէջ պիտի մնայ Լահէյի պալատը ուր պիտի նախագահէ Դեսպանաժողովի անդամներուն ի պատիւ տրուելիք կարգ մը հանդէսներուն :

Բարեգուշակ նշան մըն է աս . ո՞վ գիտէ , թերեւս այդ մանկամարդ եւ այնքան դիւթիչ թագուհին հովանւոյն ներքեւ փափաքուած համաձայնութիւնը գոյանայ , որով իրականանայ այն մեծ երազը , որուն՝ «ընդհանուր գէնընկէցութիւն» անունը կուտան :

ՌՈՒՍԻԱ իրապէս կը փափաքի գէնընկէցութեան , վասն զի խաղաղասիրութեան նախաձեռնութիւնը ունեցած ըլլալու մեծ փառքը պիտի վայելէ միշտ :

ԴԵՐՄԱՆԻԱ պիտի հաւանի գէնընկէցութեան վասն զի իր գործերը կատարած ըլլալու գոհունակութիւնը ունի արդէն :

ԱՒՍՏՐԻԱ չառ իւրե՛նէ չէ եւ արդէն իր ներքին ծընէրը ունի :

ԻՏԱԼԻԱ ամենայն սիրով պիտի համակերպի վասն զի քաղաքականութեան համար փարայ չունի :

ԹՈՒՐԻԱ արդէն աշխարհածանօթ խաղաղասիրութեամբ հաշտ աչքով կը դիտէ գէնընկէցութիւնն ալ , քանի որ ժողովուրդին բարօրութեան երաշխաւորութիւնը պիտի ըլլայ այն :

ԱՆԳԼԻԱ կը կարծուի թէ ամենայն պաղարկունութեամբ վաշտիտի անցնի իր սպառազինութիւններէն :

ՖՐԱՆՍԱ ամենայն առաքարկունութեամբ վաշտիտի անցնի Գերմանիոյ հետ իր ունեցած ԽՈՇՈՐ հաշիւներէն :

ԱՄԵՐԻԿԱ անտարակոյս աչքը Անգլիոյ պիտի տնկէ եւ անոր վաշտիտի չափէ :

ՇՈՒԷՍ՝ ՆՈՐՎԵԳԻԱ արդէն գէնընկէցութեան փարայ տընուող մը չէ :

ՍՊԱՆԻԱ արդարութիւն պիտի պուտայ եւ Բորթուս կալ նարինջներով պիտի խաղայ , իսկ մնացեալ Տանըմարքան ու Հոլանտան , Լիւքսեմբուրգն ու Պէլժիան , Յունաստանը ու ՍԵԼ Լեւը , Ռումանիան ու Սերպիան , ասոնց ամէնքն ալ Դեսպանաժողովին անգամակցած ըլլալու փառքը իրենց շատ եւ բաւ պիտի համարին եւ «այո՛ , ո՛չ»էն անգին չպիտի անցնին իսկ Ս. Պասը՝ Ս. Պասըն ալ իր ծանօթ հռչակագրով պիտի բաւականանայ :

Ն.

ԾՈՅԼԻ ՄԸ ԻՐԱՏԱԿԱՆԸ

Հաճի ազան երկիւղին ու ժամանակ տուն կը վերադառնայ եւ ձեռքի զամբիւղը սեմին վրայ դնելով՝ դուռը կը դարնէ :

— . . .

— Մէյ մըն ալ կը դարնէ :

— . . .

Զօք չէյ . . . մէյ մըն ալ կը դարնէ , ու սականջ կը դնէ :

Վերէն պատուհան մը կը բացուի եւ ձեռք մը դուրս երկնիւղով բանալի մը վար կը նետէ :

Հաճի ազան բանալին կ'առնէ , դուռը կը բանայ , ներս կը մտնէ , քիթին տակէն մոմաշով «պէս պէլլի գըլ պիր եէրէ կիթմիշ տիր» կ'ընէ՝ պու ազաւմ իշիմիզ վար :

— Քիմսէ եօգ մը պուրտա , ո՛ր էք , վար չէ՞ք գար : Հաճի ազան վեր կ'ընէ զամբիւղը ձեռքը :

— Բա ճուղա՞ս առ վերմէյէ իւլէնիյօրսն . . . գըլ նէ՞րտէ :

— Թէյգէին տունը գնաց , երթաս բերես պիտի : (Ինքնին) հա՛ , պէն տէմիտիմմի . . . : — Պէն գըլը կէթիւրէնէ դատար սէն չու պալըլը թէմիլէ , պալըլը կէթիւրմիշիմ :

— Մարդ Աստուծոյ , անցած տարուանը մոռցա՞ր :

— Ես երեկուան կերածս մոռցայ , ինչ եղեր է քի :

— Պալըլս կերար այն գիւղերը , աւրուեցար :

— Օնտան պէրի պէշ ելըլ տէֆա պալըլը ետիք . . . աղետաբար , սէն կէնէ պապա նասիւթիւնա պալըլայա՝ ճագսն ամա , պէնիմ վաղթըմ եօգ սէնի լալիյնէնէնէնէնէն պէն գըլը կիտիպ կէթիւրէնէ դատար՝ հիւ տէյիլ իսէ դէմիլին իշինտէթիւրինի պօշաւա , . . . ետալա՛ն ամա , ի-

չինտէ՝ գըրըլաճագ չէյ վար , իշտէ պէն կիտլյորըմ :

—Տուռին պալլիքը հետ առ :

—Ինչո՞ւ պալլիքը հետս առնեմ, տուն հոս չե՞ս , տուռը չուան չունի՞ :

—Տուռին չուանը քաշելով քաշելով ինչո՞ւ մաշեցրինք, առնելը խօսա՞յ է, պալլիք կայ իքէն լո՞նչ տեղը կայ չուան հինցնելուն :

—Աֆէրիմ, գարը, ետղըք քի պէն գըյմէթինի սիլմէմ, պագ նէ՞ ինձէ հիսապլար էտլյոր, կէօրիյորմըսըն... :

—Շիտալը ըսէ ամա անանկ չէ՞ ,

—Հէլպէ՞թ... գաբուլը աչմագ իչուն օտտաւան սուֆայա իւչէնմէտէն քի՞մ չըգաճագ... :

(հուռ քի՞մ սիլմիլ... :

Հաճի սղան դուրս կ'ենէ եւ քառորդ մը ետքը աղջկանը հետ տուն կը վերադառնայ :

—Հոյտէ, գըղըմ, մութվարն տօլապընտա պալըդ վար, գալուր :

—Շատ աղէկ, հայրիկ, դուն վեր ել հանուէ, հանդըստացիր :

—Ապրիս, գըղըմ, սալաթան ես կը շինեմ Աղջիկս, նայէ քայալս կայ շիշէյին մէջը :

—Մայրիկ, քացաթին շիշէն վերի քիլէրն է, նայէ մէջը կայ Զեռքս պուլաչըն է, վեր չեմ կրնար գալ :

(Մայրը միշտ նստած տեղէն) քացաթով սալաթան աղւոր չըլլար, աղջիկս, քացաթը արունի գալիֆուլիւն կուտայ, հօրդ ըսէ քի երթայ իլիմն առնէ :

—Զէմալիլին իչինտէ եօք մը ըտը, օն թանէ իլիմն ալմըչըմ :

—Զէնալիլը չալարպէցի... :

Ինչո՞ւ... :

—Մէջը կոտրելու պան կայ չըսի՞ր, վախցայ ձեռքս առնելու :

—Ո՞ւս, պէնի կիւնահա սօղմա, պէն սօյունանա գատար, գալիլ շու գէմպիլի պօշաթ :

—Հէլէ քիչ մը սօլուլս առ, մարդ Աստուծոյ, ետքը հանուէ :

—Կիթ շու կէճէլիմի կէթի՛ր... :

—Հեւքէ հեւքիդ կուտաս կոր, հէլէ նստէ՛, սիկառ մը պլէ՛... քիսլիթը տօլապլին առջեւն է, թապլան մասային վրան չէ նէ՛ աղջիլը վերցուցած պահած ըլլալու է Գիւլիւչէն բէնճիլիւչէն վար թոթուէ :

—Կէճէլիլիմ նէ՛րտէ տիր, օնը սէօյլէ պանա , վաղ կէլտի՛ք :

—Վէրի օտային ելւքն է,

—Պէն չըգըս սօյունանա գատար, գէմպիլի պօշաթ րազը թէփսիսին հաղըրլա... տէ՛, չարուք օլ :

—Մարդ Աստուծոյ... :

—Տիւնէեէմէմ սէնի, (վեր կ'ենէ եւ շուտ մը հանուելով վար կ'իջնէ) :

—Նէ՛րտէ տիր... :

—Ի՞նչը... :

—Տահա եէնի տուլաճագ, վա՛յ պէնիմ պաշըմա... րազը թէքսիսին հաղըրլա՛յտէմէտի՛ք մի... :

—Մեղք ես, մարդ, իրաւ որ մեղք ես, մի՛ խմեր ատ զէհիր գէմպլէրէկ բանը, ճիւերներդ փարատեցան լմնցան, սըվոր հուսա տեղը ափ մը էօմրդ մնացեր է, ա՛ն օլսուն բահաթ անցնելդ նայէ :

—Գալք շու քիսլիթի վե՛ր... :

—Բախիին պէս զէհիր պան մըն ալ թիւթիւնը չէ՞... ինչ հասկցեր էք առկէ, շատը՝ սինիլի զայիֆուլիւն կուտայ կ'րսեն, եկուր վաղ անցիր, հէմ մարմինիդ ֆայտա կ'ըլլայ, հէմ քէսէլիդ՝ խօսք մտիկ ըրէ :

—Շունա պագըն հէլէ, հա՛, հա՛, հա՛... սէքսէն եաշընտա ատամա տուրմուշ նէ՛ էօյլուլէր վէրիյոր... Կիթ պագ, պալըդ գալուլմուշ ըսա, պանա պիր իքի թանէ կէթիր քի մէզէ ետիայըմ. պէն քիսլիթի պուլուրում, չափուք օլ :

—Բախիին հետ պալըն մէզէն միտէդ կ'աւրէ, ալ հի՛շ չես մեղքնար կոր ինքզինքդ, մարդ Աստուծոյ... :

—Աղնատըգ, պէն կիտիլ պալըղը կէթիրիլիմ, սէն թէփսի հաղըրլա :

(Վայրկեան մը վերջը սինալի մէջ մէկ երկու ձուկ դրած վեր կ'ենէ) :

—Քա նե՛րտէ թէփսի... :

—Եկուր խօսք մտիկ ըրէ, մարդս, տա րախին մի՛ խմեր, փորդ բէք անթի է նէ՛ ատ երկու ձուկը քիչ մը հացով կեր :

—Պէն րաքը թէփսիսին հաղըրլայանա գատար, կիթ սէն պանա պիր տիլիմ էքմէք կէթի՛ր :

—Մարդ Աստուծոյ, տիլիմ մը հացով ատ ձուկերը ուտես նէ՛ փորդ պիտի կշտանայ, սեղանին տալը պան մը ուտելու իշտահդ չպիտի մնայ :

—Ո՞ւս սապըրըդ վէր, եա՛ րապալի... պէն էքմէյի կիտիլ կէթիրիլիմ, սէն շու պառտաղը կիւզէլճէ երքս, իչինէ սու տօլտուր, քանաթա եանընտա տըր :

(Վար կ'իջնէ վեր կ'ենէ ձեռքը շերտ մը հաց :

—Քա նե՛րտէ սու... :

—Խանաթային մէջ ջուր չէ մնացեր... :

—Զի՛ջնաս չի լեցունե՞ս,

—Ոտքս թմրեր է, կեցիր քիչ մը... :

—Զօք էյի, ես մինչեւ ջուրը բերեմ նէ՛ դուն սա ետթախըս հաղըրցուր, գերէ հացը ուտելուս պէս պիտի պառկիմ քի կէս գիւլերին երթամ պանիմ, ծառքս երկու չիֆթ սրիլէթ աթիլին կայ... տահա օթուրույօրսըն... :

—Կէս գիւլերին սիտի ելլամ կ'ըսես, փուլիւ եաթաթի մէջ պառկիլ կ'ուզես. կանուլս ելլալ ուզողը սէտիրին վրայ կ'երկնայ կը պառկի :

—Պունա՞ տա մը սիլի գուլը թագալն, վաղ կէլտիք, գըզա տա ետղըք տըր, պէն պրագըրըմ ետթաղը, սէն գալք սուֆրայը գօ, չօճուղ իչինի պիթիլիլի կէլլյօր :

—Սուֆրան տիյօր տրուի նէ՛ պալըլը փատ կը կարիփէշիլը մը կը փոենք, իմ նստինք տաք տաք կուտենք :

—Պէն սուֆրայը գօյանա գատար գալք շու սալաթանըն ետղընը կէլիլի :

—Սալաթան հաղըր է, սուֆրան ալ կը տրուի :

եաթախդ ալ կը սրտորաստեմ հայրիկ, դուն քէյֆդ նայէ կ'ըսէ աղջիկը սենեակէն ներս մտնելով:

— Ասլըրիս, գըզըմ, չօք եաշա, եվլատըմ:

— Հայրիկ, ինչո՞ւ բաց պատուհանին առջեւ նստեր ես, չե՞ս մտր:

— Սիկառայիս քիւլիւզն սօխախ թօթվելու համար, աղջիկս, թապլաները մաքրուելու վերջուելու են եղեր . . .

— Տէր ողորմես . . . առ հայրիկ, գոցէ՛ սա պատուհանը, կը մտնի, գոցէ՛ (թապլա մը կը դնէ քովը):

— Չօք եաշա, էվլատըմ, կ'ըսէ հաճի աղան, Աստուծոյ օրհնէնքը վրադ ըլլայ, մօրկանդ ալ ինքը ուղորմի, դերէ պու կ'իտիշ կ'իտիշ տէյիլ, քէօթիւսի ներսէ, կ'իթտիքճէ իւսթէ քօյօր . . . դարտաշ էյէր, մազալլահ, հասթալըդը ֆիլտըն օլսա, գընամամ, հէմոէ պրագմամ քի էլինի սօղուքտան սըճաղա սօքսուն: Ա՛ տընաշն մաշալլահ, էլին սաղ, այաղըն սաղ, գուլվէթին եէրինտէ ամա . . . տեսէնէ . . . թէմպէ լիք տէ պիլ խասթալըգ, հէմ էօյլէ պիլ խասթալըգ քի՛ թէնէշիլ բագլար:

(Ինքնին) հելէ քի, համա օլսուն, գըզը վալիտէսինէ չըգմատը . . . իշտէ օ վագըթ հալիմ խարապ ըտը: Հէր պիլ տիւրիւ խասթալըգլարըն միքրօպըն հէքիմէր պուլտուլար ամա, պիլ տէ շու թէմպէլլիյին միքրօպը պուլտալըլար . . . տեսէնէ, էյէր վէրէմին միքրօպըն պուլտուսա թէմպէլլիյին միքրօպը տա պուլտուսուր:

Գ. Փ.

ՊԵՏԱԶԱԳԱԺՆԵՐ

ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

ՏՐ. ԵՐՈՒԱՆԻ ԲԱՅԵԱՆՑ.— Հազիս քսանհաշար կամ քսանհանգ տարեկան երիտասարդ յժիշկ մը, գոհնատ դիմքով, թերարոյս պէխով՝ ու մօրտեքով. վտիտ հասակ մը, պատրաստ գտնուած յետեկոյթը ուսեթեմ վար կը թափի:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.— Խնդրում երես ծերունի մը, հագած է քստեհիւս մը որուն թերսը տեղ եղած ըրալը ծոցին վրայի գրպանին աջ կողմը գտնուելին կը հոսկցոտի. քաջ գոյն, նեղ տաքատը հետոսին կը նայի կարիտուն կոշիկներուն որ նոր ներկուած են:

ՍՐԱՅԱՍ ՍՕՅԻԱ [Խերունկ, չոր ու ունրոտ դէմքով յոյն կիւն մը, տօթթօրին տանտիրոսին հ:]

[Վրտուած ժամը երեքն է՝ տօթթօրին սենեակին մէջ:]

— ՏՐ. ԲԱՅԵԱՆՑ (Գրասեղանին առջեւ նստած կը մտածէ):

Այսօր ալ յաճախորդ չեղաւ մէջտեղ. . . երեք ամիսէ սա տեղ հաստատուած եմ ինչո՞ւ էս տէյի հարցնող չի կայ. անդին խեղճ մայրս ու քոյրերս Քասըմ Փաշա խրխլած տունի մը մէջ բանտարկուած՝ ասեղը աչքերնին խոթելով կ'աշխատին ու կ'աշխատին գիշեր ցորեկ որ ինծի ապրուստ ձարեն . . . բժիշկ մը Բերա գտնուելու է որ հոշակ եւ ստակ վասակի ըսին. ելայ հոս եկայ . . .

ամիսը կ'ն քիչը վեց ոսկիի պէտք ունիմ, օրը հիւանդ մը կայ խոյիլ եմ. ան ալ չի կայ . . . աստուծոյ միջնեւ իրիկուն լրագիր բօման կարդալով գլուխս սեղանիս հելէ փառք Աստուծոյ միւս օր հիւանդ մը կ'ըսայ խնամմել . . . ձիէն մարդ մը ինկաւ դեղարան բերին ես ալ հոն էի դեղագիր մը դրելու պատիւը ունեցայ. ա՛խ ան ինչ երջանկութիւն, ուրախութիւն, ձեռքէրս կը դողդըզային . . .

(Թը՛ք թը՛ք թը՛ք, դուռը կը զարնուի)

ՏՐ. ԲԱՅԵԱՆՑ.— (Ներսէն) անդրէ՛

ՍՐԱՅԱՍ ՍՕՅԻԱ.— Պօն զուր տօթթօր . . . արեւս սիգ սուրանտան քաճաթնիդ պիլ մուսիյու կէլտի սինդէ սօրտու, սօլլէտիմ աքսամա կէլէճէք. սօնկրա աքսամա տա սասնիթ պէս ալաֆրանկա կէլտի, սօլլէտիմ «տէն իրթէ աքսամա»—սօլլէմիլ եարին սանպահ սանպահ կէլէճէյիմ ձօք խաստա վար պէն . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՑ.— (Հազիւ կարող իբ ուրախութիւնը զսպելու)

— Սաթթ քաշտա՞ կէլէճէք, սէօյլ՝ մէտիմի . . .

ՍՐԱՅԱՍ ՍՕՅԻԱ.— Օհի . . . ամա սօլլէմիլ քէ սիլին եաթրօղ ձօք պօյուք խէքիմ, ձօք մէնսուր խէքիմ. . . (Փողցին դրան զանգակը ուժգին կը հնչուի).

ԵՐԿԻՄԻՅԸ ՄԻԿԵԼԵՅ.— Հա՛ կէլտի . . .

(Սանդուխին վրայէն ոտքի ձայներ կ'իմացուին, դուրսէն):

— Տօթթօր էֆէնտի պուրտամ:

ՍՐԱՅԱՍ ՍՕՅԻԱ.— Մալիթա . . . օրիթէ՛:

ՏՐ. ԲԱՅԵԱՆՑ (չուտ մը առջեւը խոշոր դիւր մը կ'առնէ եւ քիթը մէջը խոթած կը կարդայ):

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ (ներս մտնելով չիտակ կը վազէ տօթթօրին վիզը կը բաթտուի) վա՛յ երուանդս ընտա՞ր ես եաթրու՞մ աղէկ ես . . . ա՛ս ինչ ես եղեր հոգիս, մեծցեր ես կտրիճ ես եղեր. ո՛հ փառք Աստուծոյ որ լայիլս եղայ ասօնի միւրվէթը տեսնելու . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՑ (առանց բան մը հասկնալու այս խանդաղատական ցոյցերէն, պիշ պիշ մարդուն երեսը կը նայի) բայց էֆէնտի . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ (առանց նշմարել ձեւաշնեղու բըժիշկին աշխուրթիւնն ու դարմանքը) է՛յ մայրդ Բրաբ հանըն ընտա՞ր է աղէկ է . . .

Ա՛խ լուսահոգին ո՞ղջ ըլլալու չէ՞ր մի որ ինքն ալ տեսնար սա իքպալը . . . հէ՛յ կիտի Աւետիս աղա հէ՛յ . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՑ.— Բայց կը ներէք էֆէնտի լաւ մը չեմ յիշեր կոր ձեղի . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.— Չօք չէ՛յ . . . ճանրմ դուք Հալըճըլարօղլու նստած ժամանակ դուռ դրայի էլինք, ես Պրուգալնց մեծ աղբարն եմ. ան ատեն հօրդ իքի ելեզի օրթալը, վաթօրին արխատաշն էի. դուն ան ժամանակ ծ—ծ տարեկան լակոտ մըն էիր հա՛ հա՛ հա՛ . . .

Հրամանքը տունին Բէնհամինը ըլլալուդ, հայրիկդ քեզ ամենէն աւելի կը սիրէր. օր մը հիշ միտքես չեղար ձեր դպրատունը վաքանձա կար, քեզի չուկայ տարած էր մէկտեղ . . .

(Դուռը կը զարնուի)

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝—Անծրէ՛:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Ոտքս քսելով եկեր եմ, ուղուր բերի քեզի . . . Նոր այցելող մը բլլալու է. ես սանկ քովընտի կը նստիմ կ'սպասեմ. հոգ չէ ինծի համար մի նեղուի, ես տունէն կը սեպուիմ:

ՄԱՏԱՄ ՍՕՖԻԱ (գլուխը դուռնէն ներս խօթելով խորհրդաւոր կերպով բժիշկը քովը կը կանչէ եւ ակոսնջէն կը փախայ) Օ քունտուրսս իրթէ, բարա թէլի.—

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝ (չուարած) Աման մատամ աքշամ իւթիւ կէլսին տէ սա՛վ (կուգայ տեղը կը նստի):

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Հա ի՛նչ կ'ըսէի կոր . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝ (ա՛լ համբերութիւնը հասած).— Կ'աղաչեմ էֆէնտի . . . ուրիշ առիթով մը աւելի երկար կը խօսինք հին ժամանակներուն վրայօք. հիմա ինծի տեղէ մը կը կանչեն կոր, սղասուհին ըսաւ թէ ծանր հիւանդ մը կայ որ իմ խնամքներուն կ'սպասէ անհամբեր . . . ի՛նչ է նայինք ձեր հիւանդութիւնը:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—(Համակերպելով) Էֆէնտի՛մ ինչպէս գիտէք քիչ մը նիհար կաղմութիւն ունիմ, միւս օր տունը հաւկիթով քաստրմա եփած էին, կը խենթենամ այդ կերակուրին համար. ես ալ քանի մը հատ կ'նճեր էի անորժակով կերայ. ճաշէն վերջը սրճարան դացի մինչեւ իրիկուն իքի ելիզ խաղացինք. իրիկունը տուն եկայ անորժակ չունէի. վրաս քիչ մը կ'ստրածութիւն կար առանց կերակուր ուտելու պառկեցայ, բայց անկողինին մէջը քունը աչքիս չըմտաւ. գիտես քի ստամոքսիս մէջ պատ կը հիւսեն կոր, այնչափ անհանգիստ եղայ. . . ինծի անանկ կուգայ կոր քիմ վրաս տաք տաք ջուրեր կը պարպեն կոր, վերմակս մէկդի նետեցի. անա՛նկ տալմիշ եմ եղեր առտուն ելայ քի ոսկորներս ջրմըր ջրմըր ծան կը հանեն կոր Վրաս դող մը, փորս սանձի մը, վերջը երեսնիդ վարդէ ջուր . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝—Հասկցայ . . . հիմա ի՛նչ կ'զգաք կոր:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Ամա տօքթոր խօսքս մի կըտրեր քի հիւանդութիւնս լաւ մը հասկցեմ. նէ իսէ էֆէնտիմ ան օրը դուրս չեկայ. մէկ քանի օրէ ամէն կողմս իը ցաւի, ի՛նչ ուտեմ նէ կը քացղի. տունէն ըսին քիմ ինքզինքդ աղէկ հէքիմի մը ցուցուր. աղէկ հէքիմ ո՛ւր է կ'ըսէի կոր Աստուծոյ պիտի ըլլայ ձեռքս լրագիր մը անցաւ, հրամանքիդ անունը կարդացի երթամ ինքզինքս անոր ցուցնեմ ըսի . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝ (քիչ մը քննելէ վերջ հիւանդը, դեղադիրը կը գրէ եւ մարդուն կուտայ պէտք եղած բացատրութիւնները տալէ վերջը)—Մանաւանդ որ քանի մը օր քեհրիզ պիտի ընես . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Շնորհակալ եմ տօքթոր (ձեռքը գրպանը կը խոթէ—բժշկին աչքերը, ուրախութենէն կը պճլտան—եւ դուրս կը հանէ հինցած թիթեղեայ ծխախոտի տուփ մը եւ սիկար մը պլորելով կը շարունակէ) Ան չէ ամա տօքթոր սոյս սենեակին կարասիները քիչ մը տահա շնորհքով ըլլալու չե՞ն. տօքթորի մի սենեակը

պրօ այնա անվայել է, չիյտէմ ամա սանքի աղւոր քօնսօլ մը ըլլայ տահա աղէկ չըլլա՞ր . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝ (սրտնեղած ոտք կ'ելլայ)—Այո՛, անշուշտ . . . ինծի կը ներքե քրթամ . . .

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Քեզի բան մը պիտի ըսեմ ամա չը սրթողիս, իրաւ է քի հրամանքդ անդին ասդին շատ շէօհրէթի ես բայց ես կ'ուզեմ քի մեր մահալէին յմէջ ալ ձանչցուիս. չիւնքի ըսելու համար չըլլայ մեր փողօցին մէջ ստակ շահելու գործ կայ, մերքովի տունը 2 թիֆօլ կան, գիմացնիս աղջիկ մը սամլիֆանէն կը պառկի կոր. հելէ էնֆիլահայայէն տասը տասնըհինգ հիւանդ աղէկ վիճակի մէջ չեն . . . անճարակ յոյն բժիշկ մը ունինք անոր ձեռքը մնացեր են խեղճերը. հիչ խօշնուտ չեն ամա ի՛նչ ընեն, աղէկը չգտնալնուն խանաամ կ'ընեն կոր . . . իմ միտքս անոր օտքը մեր փողօցին խայտըրմիշ ընել է. եթէ միւսսիս սեպես նէ, ես հոն ալ յախը դազեմա եմ խօսքս խաթրս կը սեպուի, անոնց քեզի ջամըրմիշ ընել կ'ուզեմ . . . ի՛նչ կ'ըսես:

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝ (չատ դռն ժպտալով մը)—Շատ շնորհակալ կ'ըլլամ, քիս երախտապարտ կ'ընէք:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Տէ՛ր ողորմեա «շնորհակալ կ'ըլլամ» ի՛նչ ըսել է պարտքս է նէ . . . դուն իմ դաւակս կը սեպուիս . . . քեզի համար աշխատիր ճիտիս պարտքն է. ֆախամ գործը իմ ըսելովս չի լինար. պէտք է որ դուն օր մը. ուղեսնէ այսօր իրիկունս դէմ կառքով մեր տունը գաս հաղըր մայրս ալ քիչ մը քիթը կախած է նայիս . . . մահալէցիք պիթիւսմ պիտի ըլլան ինծի պիտի հարցնեն թէ ո՛վ է սոյս հէքիմը, ա՛լ անկէ վերջը գործը ինծի ձգէ՛:

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝—Այո՛ շատ աղէկ կ'ըլլայ . . . բայց ես ձեր տունը չեմ գիտեր թէ ո՛ւր է:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆՅ՝—Ճանըմ ես կուգամ քեզի կը տանիմ:

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝—Ա՛լ ի՛նչ զանմեծ . . . ինծի համար պիտի յոգնիք . . . ինչպէ՞ս շնորհակալ ըլլամ:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Չէ՛ հրամանքիդ հետ պիտի սրթողիմ աստար շնորհակալութիւն ֆալանէն հազ չեմ ընեք:

—Հիմա կերակուրէն վերջը քանիի՞ն գամքդի առնեմ պէլքի այս իրիկունէ ամէնուն ալ ջամտըրմիշ կ'ընեմ քեզի:

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ՝ (սոյս նոր լաճախորդներու խոստումն մէն չափէն աւելի հրճուած, տակայն իր արհեստական հնարքները չի մոռնար)—Հիմա շխտակ պիտի վաղեմ քիչ առաջ կանչուած տեղս, անկէ հոս պիտի գամ եւ մինչեւ կէս օր հոս պիտի շարունակեմ հիւանդներս ընդունիլ եւ ճաշէն վերջը, ժամը մէկէն մինչեւ երկուքուկէս դուրսի հիւանդներուս պիտի պտըտիմ ժամը օրն քառորդ մնալով ձեզի հոս կ'սպասեմ:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.—Շատ աղէկ . . . ես հիմա երթամ մեր փողօցին սրճարանը ամէնուն եայմիշ ընեմ քի մայրս գէշ հիւանդ է, խոյախ տօքթոր մը պիտի բերեմ եւ սոյն . . .

— Հա՛, չմոռնամ տօքթոր այս իրաճով իմին հիւանդու-
թիւնս չանցնիր գիտեմ: Թէ ինծի համար եւ թէ մօրս
համար որչա՛ն վիզիթաւ ըլլայ նէ տեղ մը գրէ՛ քի, քսան
երեսուն վիզիթաւ ըլլայ տէ դօքտան տամ . . . քեզի ալ
պարէ բանի մը ետրամիշ ըլլայ. չէ ուզես նէ հիմա
վճարեմ, իմ հաշիւիս տահա յարմար կուգայ:

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ.— Ծանրմ թէքլի՞ք ունինք էֆէն-
տիւմ . . . հիմա օձիկի՞դ փաթտուեցայ որ ստակի խօսք
կ'ընես:

Պ. ՊՐՈՒԶԱԵԱՆ.— Զէ՛, ամա, ես հաշիւս մաքուր
բռնել կ'ուզեմ . . . է՛հ անանկ է նէ ես հիմա երթամ
իրիկուան կուգամ. (դուրս ելած պաշտօն մեկուսի) ի՛նչ
եւ է զաւալը մարա ա՛լ արթըխ հէքիմի կարօտը չախտի
քաշէ. խեղճ կնիկը հէքիմ հէքիմ աէյի կը ճուար «մա-
րիկ, առ քեզի անարծաթ բժիշկ մը, պօլ պօլ կշտացիր
հէքիմէ» պիտի ըսես: Խեղճ տօքթորը որչափ հավէտէն-
միշ իշխու երբ մեր թաղը շատ հիւանդ կայ ըսի՛ հը՛, ան
հավէտով ապրի թող. մեր թաղեցիները գրպաններնէն
ուրիշ տեղ հիւանդութիւն չունին, մաշալլահ:

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ. (ինքնիրենը).— Ի՛նչ անուշիկ մարդ է
Աստուած զրկեց. բաւական օգուտ պիտի ունենայ ինծի՛:
Հարաթան մարդ մը կ'երեւայ կոր.բայց ասդին անդին զիս
կըլծախէ. հիմակուհիմայ 10-15 յաճախորդի տէր ըրաւ
ինծի մէկ օրուան մէջ . . . երկուք՝ ինք եւ մայրը, թա-
ղին մէջ 2 թիֆօ, 1 սաթլիճան, 10 ինֆլուէնցա. է՛հ
այսչափը գէշ բան չէ այսօրուան համար:

ՄՅ. ՍՕՅԻԱ.— Ծանիմ տօքթոր աքչամա քունտու-
րաճը կէլէճէք նէ սօղլէյէճէյիմ . . .

ՏՐ. ԲԱՅԵԱՆՅ.— Սաթթ պէշտէ (քիչ մը մտածելէ
վերջը) եւք ալթըսա՛պէնի պէքլէսին, բարասընը վէրէյիմ
ճէհէնէմ օլտուն: ԶԵԼԵՆԹՈՍ



ՆՈՐ . . .

Նոր միշտ նոր, ամէն ինչ նոր, նոր նիւթ, նոր միտք,
նոր երեւակայութիւն, նոր գրիչ, նոր թուղթ, նոր մե-
լան, վերջապէս նորն է որ կը փնտռուի աւելի: Տնօ-
րէնները ու խմբագրապետները նորութիւն կը վըն-
տուեն . . . : Ի՛նչ է այս նորը. Կ'անցնիմ ուրեմն գրա-
սեղանիս գլուխը ու կը պատրաստուիմ գրել ՆՈՐ: Կը
փոխեմ սեղանիս աստիճն ու ՆՈՐ մը կ'անցնեմ. կը փո-
խեմ կաղամարս՝ իմ երեք տարուան հաւատարիմ ըն-
կերս. գրիչս՝ որ հիննալ չէր գիտեր. կը հագուիմ Զատ-
կական պահեստի հագուստներս, որոնք դեռ (մազազա
կը հոտին) կը փոխեմ կօշիկներս՝ որոնք նոր ըլլալուն
ՆՈՐէս հոգին կը վառեն, եւ կը մտածեմ թէ արդեօք
նոր գրելու համար հա՛րկ է փողկապս ալ փոխել . . .
այո՛, ան ալ նոր կը կապեմ կարմիր ռէկա՛մ մը: Ուստի
օ՛ն անգր, գործի . . . բայց ներեցէք բան մը մոռցուե-
ցաւ, գրպանի ժամացոյցս որ չորս տարիէ ի վեր հա-
ւատարմաբար կը ծառայէ, այս նորութեանց մէջ ան ալ
գոհելու է արդեօք . . . հա՛յ, բարով խերով ուզէիք այդ
ՆՈՐ:

Հիմա վերնագիրս է ՆՈՐ, նորին մէջը նոր . . . նո-

րածինը . . . (ախանջը խօսի Հաղարին), նո . . . Թըք,
Թըք, Թըք . . .

Ո՞վ է ան, չեմ կրնար բանալ չաբաբ զբաղած եմ.
տասերկու ժամ վերջը եկէք . . .

— Տղաս ճաշի չե՞ս իջնար . . . :

Հա՛, աղէկ միտքս ձգեց, նոր ճաշ չեղաւ. նոր
գինի, (գինիին հինը կը փնտռուի) նոր սեղան, նոր ան-
ձեռոցի մը պատմութիւնը . . . ռէֆ Տէր Աստուած նիւթ
տուր, նիւթ, այս տողերը կարդացողն ալ հատաւ, հա-
լեցաւ. գրողն ալ (Աստուծմէ չի գտնաս դուն խմբա-
գրապետ քի ինծի տէրտի մէջ ձգեցիր) . . .

Գսանեւհինգերորդ սիկառս վառելէ վերջը եւլէս:
Նորաստակ հարսերը . . . չեղաւ Խաչապուրտ կ'ողջուն-
ուիմ. Նորեւել միւսինները . . . քիրաղի գաւազանները
այս տարուան մօտան ըլլալով մարմինս կը չոյեն, կը
վախնամ ըլլամ տիկիներու մասին նոր նոր տեղեկու-
թիւններ տամ . . . Զըլլար, կ'ելլան աղջիկ շեն տար, ար-
գէն սկսած են պատուհաններէն ըսել (իշտէ աս ճահիլն է
մեր վրայ կրողը, էրկու աշկը խաղայ, հիշալ բէշերնիս
չի ձգեր կոր): Նոր բացուող պաշտօն ռէկա՛մ մը ընեմ
կը վախնամ թէ քոչտին կը կտրէ: Նորաբողոք օրիորդ-
ները քիչ մը կարմրեցնեմ. սուրբներու մէջ զիս մէջտեղ
ձգելով խայտառա՛լ կ'ընեն, այս բնաւ գործիս չի գար:
Էյ նոր Բաճաթլէֆաթ վաճառակա ները . . . ան ալ ոչ, երբ
օր մը գործ ուզեմ շոգենաւի ստակս վճարելու համար
ամսական վաթսուս զըշ.ը անգամ շատ կը տեսնան (թիւ-
երէք դիմեմ . . .):

Ժամը վեց կը վարնէ դեռ նիւթ չունիմ. տանը մէջ
ամէնքն ալ երկրորդ եւ երրորդ երազներով կը խռկան.
քունը աչքէս կը վազէ ու դեռ նոր նիւթ չունիմ: Մտա-
ներս մաղերուս մէջ. պաղած աչքերով սպիտակ թուղ-
թին վրայ կը նայիմ, որուն վրայ իբր խորագիր երեք
խոշոր տառեր միայն կ'երեւին . . . ՆՈՐ. չոր կմախք մը
զոր զարգարելու համար մարմնոյս էն տաք քրտինքը կը
թափեմ (Ալլահ աճըսուն հալի բերիշանմա):

Գիշերը կ'անցնի, աքլորները իրենց քուններէն ար-
թընցած առաւօտը կ'աւետեն որ շատ մօտ է, դեռ նիւթ
չունիմ: Մարմինս կիսով չափ սեղանին վրայ կը մտա-
ծեմ . . . կամ աւելի ճիշդ կը մրափեմ: Յանկարծ տա-
քութիւն մը, հրդեհ մը կ'երազեմ: Սրդեօ՛ք . . . իրա-
կանութիւն, կայրիմ կոր, ելէ՛ք անեցիներ հասէք կ'այրիմ
կոր . . . : Սեղանիս վրայ ծուխ եւ բոց: Աշտանակը որ
կը վառէր դէմս, քնոյ մէջ ըրած շարժումներէս գլորե-
լով բռնկեցուցած էր թուղթերս եւ գիրքերս որ հոս
հոն նետուած էին: այդ բոցերէն շուարած դուրս կը
նետուիմ սենեկէս անիծելով այն օրը երբ նորութիւն
ուզուած էր ինձմէ:

Վառած թուղթերուս մէջ դեռ կը կարգամ ընդ ա-
ղօտ միմիայն վերնագիրս որ այսքան փորձանք աւղա-
ցուց գլխուս . . . ՆՈՐԸ: Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏԱԿԵՐՆԵՐ

ԱՒԱԳ ՕՐԵՐ—ԴԱՏԱՐԿ ԲՍԱԿՆԵՐ

Աւագ օրերու հետ շատ հաշտ չեն դատարկ քսակները, այնպէս որ ամէն կողմ էլ շարունակ պահանջ է:

ՊԱՏԱԿԵՐ Ա.

Կէնք.—Չը հասնէի, չը կատարէի քեզի պէս տէր տիրական ունենալուս, ասանկ օրով մեզքն ալ ճիտդ ըլլայ, հոստ ուր տարի է կարգուեր էս, նէ օրէ կայ նէ չէ՝ ֆիստան մը չը չինեցիր ինծի. Ծնունդին՝ հաֆիֆը չինելուս Ձատկին ծանր մը կը չինեմ ըսիր, նէ հաֆիֆը տեսանք նէ ալ ծանրը, Ատուածմէ կանաս պիւլէքի, ասանկ օրերով իս աղօթքէ, խոստովանանքէ ժամէ տէտրկին ըրիր:

Էրէնք.—Աս կիրա՛ր գիշերուընէ պէրի է քա՛, տահա չը լինցա՛ւ:

ՊԱՏԱԿԵՐ Բ.

Կէնք.—Հայտէ՛, չեղա՞ս քա մարդ, կիտե՞ս սահաթը քանի՞ն է, հայտէ ու չը լինաս:

—Չէ՛, էս այսօր չարչի չպիտի երթամ:

—Մե՛ղայ, իսնիթեցա՛ր, ի՞նչ եղար նէ ըսէ:

—Ինչի՞ս մեղան է, քէֆ չունիմ, չսիրտ երթամ զէսսէլամ:

—Քա՛, ասանկ օրով տունը մնալ կ'ըլլայ, պահ ունիմ, խըղմէթ ունիմ:

—Է՛յ, տուն կ'ենէ խըղմէթըդ ըրէ, էս քեզի ի՞նչ դարար ունիմ:

—Ճանճմ դարար ունիմ, չունիմ, կ'ա՛, հիմա աֆախաններս թէրէս պիտի ցատկեցնես:

—Մի՛ պուտք քա, հիմա չօճուխները կ'արթնան:

—Է՛յ, տօղրուտու, հիմա՞ չօճուխները մեղքնաղդ պահեց, էրկու շաբաթ է էրեսդ ի վեր էսիր էմ էդեր քի ոտուընուն մէյմէկ պահ առնես, Ձատկին աս չարըլաներովը պիտի մնան. հէլէ իմին ֆիստանա հիչ չես հարցնեմ, բէլը սաջախ սաջախ կախուեր է, զօր դար Ծընունդին ֆիստան մը չինեցիր, անոր ալ չիւրալը խուսուր մնաց. քա՛, մէջքիս կարմիր քօրակայ մը պիլէ չառիր քի պարէմ Ձատկին ան օլտուն ըլլար:

ՊԱՏԱԿԵՐ Գ.

—Աղապա՛, ինծի չաքէթ մը ա՛:

—Աղապա ինծի բանթալոն մը առ:

—Դուզում աղապա, կ'առնե՞ս:

—Ասօր հետդ չարչի կա՞նք, աղապա:

—Է՛յ, կեցիր, նայի՛նք, սրերնու՞գ մտիկ ընելու է:

—Ինծի ինծի:

—Չէ անորը նոր է:

—Ո՛ւր է, ծօ՛, աս նո՞ր է, խողթուլսա նայէ՛, խոնկուս, ժամ պիլէ չպիտի երթամ:

—Օղլում, ատոր հին չեն ըսեր, քուկինդ ալ նոր է, քուկինդ ալ հիմա Ձատկիը ասով անցուցէք տէ ետքը Աստուած ողորմած է:

—Չէ, չէ, չեմ. . . հիւ . . . հիւ . . .

—Էյ լալէն ի՞նչ կ'ելլայ, շաբաթ մըն է մտիկ կ'ընենք կոր, նայեցէ՛ք, իմին բանթալոնս ալ լմնցեր է ամա, ինչ ընեմ գէշ աղէկ Ձատկիը ասով պիտի անցնեմ:

ՊԱՏԱԿԵՐ Դ.

—Ո՛ւր է, ճանճմ, օղերս՝ աս էրէկ իրիկուն պիտի բերէիր նէ՞, կէնէ չբերիր:

—Ի՞նչ ընեմ էսիւլա՞ն է, բիացան գործ չի կայ որ լմնցեմ տէ առնեմ տեղը. . .

—Ի՞նչ, տե՞ղը մի՛ էս անոր մէկ թելէն վաղ չեմ անցնիր:

—Կեցիր, ճանճմ, աճէլէ մընէր:

—Ինչո՞ւ, աճէլէ չպիտի ընեմ, էս օղերս հիմա կ'ուզեմ, վաղը Դրնրացէքին պիտի երթամ, հինգշաբթի Ոսնուլայի, ուրբաթ ալ Թաղումի:

—Օղերը ինչէ՞ն քուկդ կ'ըլլայ կոր:

—Հասկա որի՞նը պիտի ըլլայ, քուկին տկանջիդ օղն է:

—Չէ՛ ամա, քուկդ ալ չէ՛:

—Է՛հ, գէհէր քու մօրդ է, պրօչս ծախեր տէ ատիկայ առեր էի:

—Պա՞շտ ով տուաւ քի:

—Քա՛, ան ալ կ'ընա՞ց, գէրէ լեզուիդ դարձուածքէն հասկայ:

Էս հիմա, հիմա օղերս կ'ուզեմ, էս կը բերես, էս չէ նէ էս գիտեմ ընելիքս:

—Սուս պէ, էրէկ խոստովանեցայ. ասօր մեղքը մի՛ խոթեր:

—Մեղքը քու ճիտդ, ասա՞լ օղերս բեր տէ, ետքը խոստովանէ՛, քու տեղդ ե՞ս ապաշխարանք պիտի քաշեմ, խոստովաներ էս տէյի գէհէր իմին օղերս վրայ պիտի երթան, չօք չէյ, բեր, հայտէ՛ նայի՛նք, չէնէ արպէտան կը բրցնեմ հա՛:

ԿԱԿՈՍ

ԴԱՐՁԵԱՆ ՄԱՅՐԻԳԻՒՂԷՆ

ԱԶՄՕՏԷՆ ԻՆՉ ԿՐՍԷ

Ականջներովս լսեցի հետեւեալ խօսակցութիւնը որ տեղի կ'ունենար հրաժարեալ Թաղական Խորհրդայ անգամի մը եւ հրաժարիլ չաւղող հոգաբարձութեան անգամի մը միջեւ:

Թաղ. Խորհրդայ անգամը.—Ինչո՞ւ գալոցին ծախքերը չչափաւորեցիք ու պարտք թողուցիք:

Հոգաբարձութեան անգամը.—Որովհետեւ գալոցա՛նս նոր չըջանին սիկզըր ամսական 500 զրչ. դեզչեցիք:

Թ.—Ի՛նչոյն կրօնի ուսուցչին եւ ձայնաւոր դասատուին ամսականները մեր վրայ առինք:

Հ.—Կրօնք, եկեղեցի մեզի չի վերաբերիր:

Խ.—Մեզի ալ ձեր բացը չի վերաբերիր քանի որ պաշտօնապէս դրած ենք ձեզ ժամանակին որ, եթէ չէք կրնար մատակարարել հրաժարեցէք:

Հ.—Հա՛, հրաժարէինք որ մանչերը աղջիկներէն
բաժնէիք, հէ՛. չպիտի հրաժարինք, չպիտի հրաժարինք,
չպիտի հրաժարինք:
ԱԶՄՕՏԷ

7 Ապրիլ 1899

Յ. Գ.—Լեռջին պահուն իմացայ թէ եթէ պարտքը
նոր թաղական խորհուրդը չճանչնայ, վարժապետական
քսա՛յներու մեծ վտանգ պիտի սպառնայ:

ՆՈՅՆ

ՆԱԿԱՐՆԵՐ

Տանտիկինը՝ սղոստուհիին,
Սուրբի՛կ, այդ քու անբարոյական վարմունքիդ հա-
մար քեզ պիտի ճամբեմ տունէս:
—Սղոստուհիին (հեգնելով). եթէ էֆէնտին ալ իր
հաւանութիւնը տայ ստիպյն . . .

* * *

Աղնուականը մուրացիկ տղուն.
—Փոխ սնակ դպրոց երթալու. ինչո՞ւ կը մուրաս
աղաս,
—Հօրս համար կը մուրամ, հացի կարօտ աղքատ է:
—Ո՞ւր է հայրդ:
—Հոս, վարը, օդի կը խմէ:

* * *

Անգղիայի մը՝ անդունդի մը եղերքը կեցած ամե-
նայն սաղարիւնութեամբ.
—Հոս է, ճիշդ հո՛ս, ուր ինկաւ կինս սխալ քայլ մը
առնելով, մէկ վայրկեան եւ 20 երկվայրկեան տեւեց
մինչեւ որ անդունդին յառաւ հասաւ. հիանալի բան,
երկար տտենէ ի վեր այսպիսի սքանչելի անկում մը
գիտած չէի:

* * *

Մարդ մը իր տղուն.
—Դննի՛կ, այսօրուան մօտիսթրային գալը իրիկուան
հօրդ խաղար չի տաս. հա՛, տղաս, վաղն ալ դպրոց չեմ
դրկեր քեզ:
—Խենթ եմ մայրիկ, նայէ՛ տռջի ցորեկ Յակոբ ա-
ղային գալը խաղար տուի՞ հայրիկիս:

* * *

Սա եւրոպացիք որքան կ'աշխատին նոր գիւտեր ը-
նելու համար, կ'ըսէր անցեալ օր միւսիւ Վէնային իր
բարեկամին, լսեցի թէ առանց կոճակի զգեստներ ալ
հնարեր են:

—Օ՛ր տո շատ հին բան է, կինս ջնայէ՛ ըլլալէն ի
վեր իմ զգեստներս բոլորն ալ առանց կոճակի են:

ԽԱՌՆ

Մ Ո Մ Ո Վ Կ Ը Փ Ն Տ Ռ Ո Ւ Ի

Բէլա երթալով, առանց բուստայի տուէի՛լ մը
գրպանը դնելու, տուն դարձող տիկին մը:
Ամուսնութիւնը էա զէս ըմբռնող շէ՛ր փեսայու մը:
Ոսկին մէթալիքի տեղ վատնող եւ չի զղջացող Բե-
րաբէնէրը:

Հարսնիքի ռեպէնիւթը հինգ տարիէն պակաս հադ-
նող ամուսինները:

Առանց ֆայէթի քառորդ դար շարունակող վաճա-
ռականները:

Գիւնըները առանց խալալու քնացող Խեղճիկները:
Մէկ գլխարկը վեց ամիսէն աւելի դնող տանտի-
կիները:

Տարիներով դպրոց գացող եւ քիչ մը ձեւ ու կար
գիտցող չըջանաւարտուհիները:

Առանց մէջը դուրս դարձնելու նոր բաբէ՛մ հադ-
նող վաճառականի գրագիրները:

Օրը տասնէն պակաս խաճուէ խմող խմրագիրները:
Հաչիւր մաքրելով սպասուորը ճամբուս զնող Էէնէ
Էրաբէնէրը:

Առանց սիրահարութեան ամուսնացող զոյգերը:
Դպրոցներու մէջ բարոյական դաստիարակող դաս-
տիարակներն ու դաստիարակուհիները:

Դպրոցական Էթէնէրը առաջուկ չարող տնտեսները:
Բաբէնէրին քսանեւչորս ժամէն պակաս գործա-
ծող . . . ուհիները:

Իրական գոհարէ մատանի գործածող գարավերջիկ
Բաբէնէրը:

Բսանէն պակաս աղջիկտեսով ամուսնացող Ժամաշա-
նէրը:

Այս տողերը գրելուս համար զիս չմեղագրող Էրեւ-
նէնէրը:
Վ. Փ.

Չ Ե Մ Չ Ա Ր Մ Ա Ն Ա Ր

Թէ Սկիւտարէն զրէն ինծի բաց՝նամակ մը, մէջը
լեցուն բամբասանքով, չեմ դարմանար:

Մագրիկիւզէն զրեն ինծի, թաղականի ընտրութիւնը
ապօրէն է, չեմ դարմանար:

Թէ Բէլայէն ըսեն ինծի, տէրտէրն եկեր, ժամը մը
տեր, բարայ կ'ուզէ, չեմ դարմանար:

Գատըգիւզէն երդնուն ինծի թէ գոյրոյը բարեկարգ
չէ, բանիկն ա՛ս է. չեմ դարմանար:

Թէ Պալաթէն վաղէն ինծի, համազեն թէ, դարձեալ
եւ մըշտ Դափամաճին տնօրէն է. չեմ դարմանար:

Գում-Գարուէն յայտնեն ինծի թէ Գի՛ճ Սա՛նէ ուր
Մայր թաղի կամ թէ Դուրսի Դէ՛րբաշէ թաղական է.
չեմ դարմանար:

Թէ Սասգիւզէն պոռան ինծի, Էնէլէշէն աղջիկնե-
րուն հացը ջուրն է. չեմ դարմանար:

Սամաթիայէն կանչեն ինծի, եւ հաստատեն, թէ
Բաբէնէն մրտեր են, չեմ դարմանար:

ԵՍ

«ԾԱՂԻԿ»Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԷՆԿԵՐԻ 7 Ապրիլ. — Ուաքի ցաւ շունեցող առաջ-
նորդական Տեղապահի մը պէտք ունինք Ձատիլը ա-
ռանց վարդապետի չանցնելու համար:

ՍՂԵՐԻ 7 Ապրիլ. — Փառէն վարդապետ հասաւ հի-
մակուհիմայ էջօրէի կը խօսինք իրարու հետ, մէկմէկու
լեզուէ չհասկընալնու համար: Ձատիլի քարոզը էջօրէի
պիտի տայ:

ՏՐԱՊ ԶՈՆ, 7 Ապրիլ. — Շարժի մը ֆառ-էջօրէի
բէշօրէի պիտի իջնայ: փողոցները հիմակուհիէ լեցուն
հաւկիթ:

ՊՈՒՍԱ, 7 Ապրիլ. — Մեծ աղաներու էջօրէի ը-
նող տնօրէն մը կ'ուզենք: զիմեկ Գափուհեանի:

ՍԿԻՏԱՐ, 8 Ապրիլ. — Աղքատականամը որոշած է
աղքատ հիւանդներու յատուկ 10 անկողին պարունակող
գարմանատուն մը հաստատել: Սիւլտանիք խոստացան
միւսմ տալ այս օգտակար ձեռնարկին:

ԱՂԳԱՅԻՆ

— — — — —

Վանայ պոյեղու հովիւ Տ. Ներսէս եպիսկո-
պոս Ասլանեան նախընթաց օր Ս. Պատրիարք Հօր
հետ աեակցութիւն մը ունենալով, յայտնեց թէ,
պինքը դարձանող բժիշկներուն տուած խորհուր-
դին համեմատ յետաձգած էր իր ուղեւորու-
թիւնը: Տ. Ներսէս Սրբազան այսօր ճամբայ կ'ել-
լայ Մէսաթըրի շողենաով: Ս. Պատրիարք Հօր
տնօրինութեամբ Ն. Սրբազանութեան պիտի ընկե-
լանայ Արմաշու Դպրեվանքի սաներէն Շահլամեան
Տ. Վահրիճ վարդապետ որ խառն ժողովի որոշ-
մամբ Բղիի առաջնորդական տեղապահ կարգուած
էր: Տ. Վահրիճ վարդապետ երեք ամսոյ չափ
Վան պիտի մնայ աջակցելու համար Տ. Ներսէս
Սրբազանի և յետոյ պիտի ուղեւորի իր պաշտօ-
նատեղին՝ Բղի:

— Պրուսայի, Ռոտտթի, Կեսարիոյ և Պիլէ-
հիկի առաջնորդներուն հրահանգ արուեցաւ Պատ-
րիարքարանէ, որպէս զի պատրաստուին Ձատիէն
վերջը Էջմիածին ուղեւորել, եպիսկոպոս ձեռնա-
դրուելու համար:

— Նպաստից Յանձնաժողովը՝ անցեալ երեք-
չարթի օր իր նիստը գումարելով կարօտեալներու
նկատմամբ գորառներէ հասած գրութիւնները
նկատողութեան առաւ և որոշեց 400 ոսկիի չափ
նպատակ մը յատկացնել Տիարպէքիլի և Ակնայ
կարօտեալներուն:

— Յայտնի է թէ Կրօնական Ժողովի որոշմամբ
Պօթուշանի Տ. Աթանաս քահանան կարգաւոյժ ե-

ղած էր. այս անգամ տեղւոյն աղբայինները խընդ-
րեր են որ յիշեալին ներում ըլլայ: Շատ ուշ մնա-
ցեր են Պօթուշանցիք, վասն զի այդ մասին պատ-
րաստուած շրջաբերականը ճամբայ ելած է արդէն:

— Սղերդի առաջնորդական Տեղապահ Տ.
Փառէն վարդապետ վերջապէս հասեր է իր պաշ-
տօնատեղին:

— — — — —

Սամաթիայէն կը դրեն Սուրհանդակի.

«Ո՛ւժ սա Մաքրիգիւղցիները» կը դրէ Սա-
մաթիայէն «Յիսուննոց օրիորդ մը», «Այդ երիտա-
սարդները, որոնց մէջ դժբաղդաբար ինձ նման
խըռփածներ ալ կան ձիւնապիտակ մազերով աշ-
խարհի է՛ն երջանիկներն են, մոմտուք բնաւ չու-
նի՞ն արդեօք, որ փոխանակ խելքերնին մտքեր-
նին դործերնուն տալու. մեզի խօսք նետելը բան
դործ ըրած են իրենց: Հապիւ թէ Մաքրիգիւղի
կառախումբը՝ մանաւանդ առատները՝ Սամաթիոյ
կը մօտենայ, և ահա կը բացուին վակօններուն
պատուհանները, ուրկէ ձեռքի շարժումներ, օ-
ժանդակութեամբ աչքի, քթի, բերնի ծամածը-
ռումներու, . . . անթել հեռագրի շարք մը կ'ուղ-
ղեն դէպ ի մեր կարգի տուններու պատուհանները:
Ասոնց անտարբեր պիտի մնայինք, կը յարէ «Յի-
սուննոց օրիորդը», եթէ Սամաթիոյ յիշուած տու-
ները՝ միւս կողմն ալ երես ունենային»: Օրիորդը
յորդոր կուտայ Մաքրիգիւղի հայ երիտասարդնե-
րուն, որպէս զի տոհմային արժանապատուութիւն
ունենան, և գոնէ օտարներու առջեւ չանպատ-
ուեն իրենց աղգակիցները: Ու կ'եզրակացնէ թէ՝
իբրեւ օգտակար ժամանց, կրնան . . . լրագիր
կարդալ:

Օգտակար խորհուրդ մը արդարեւ, բայց խըն-
դիր է դիտնալ թէ այդ օրիորդը նոյն խորհուրդը
պիտի տա՞ր եթէ . . . յիսնամեայ չըլլար:

ՄԵԾ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

ՋԱՅՆԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԻԱԿԱՆ

Ապրիլ 21 Զոյ եքշաբթի գիշեր ժամ 9ին (Ը. Ե)

ԻԻՆԻՅՈՆ ՖՐԱՆՍԷՉԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՉ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ

Մ. Ս. ՔԷՕՍԻՆԱՆԻ

Սջակցութեամբ իր աշակերտներուն, քաղաքիս լաւա-
գոյն քրօֆեստօններու և տէլիթանթիներու:

ԳԻՆ ՏՈՄՍԱԿԻ ԿԷՍ ՈՍ ԿԻ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՍՄԱՐԱՆԱԳՈՒԹԻՒՆ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բոլորովին բարեփոխուած եւ կրկնապէս

նորասացած

Յանձնարարուած Ազգ. Կեդր. Վարչութեան Ուսումն.

Խորհուրդէն եւ վաւերացած Կ. Պոլսոյ

Առեւտրական Սենեկէն

Ի Ն. Տ Ի Ի Զ Է Ն Ճ Ե Ա Ն Է

600 մեծադիր երեսներէ բաղկացած սոյն ընտիր գործը կը պարունակէ վաճառականութեան վերաբերեալ ամէն կարեւոր գիտելիքները եւ օրէնքները, վիճաբանական տպագիր փոխանակագրի, չէքի եւ տոմասի իրական օրինակներ, տոմարակալութիւնը, կրկնատոմարը ընդարձակօրէն բացատրուած. զլիաւոր աղգայ դրամները, կշիռները, չափերը, դամպիօի զինները, դրոշմատուրքերը, եւայլն, եւայլն: Պիտանի եւ օգտակար զարդաներու, առեւտրական ասպարէզին պատրաստողներուն, եւնոյն խի գործի մարդոց համար: Փին կազմեալ օրինակին 23 դրուշ:

Է Ք Ի Թ Ա Պ Լ

[ՄԻԱՅՆԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ]

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԶՕՐ

Կենաց Աստուծոյ խաղաղութեան Ընկ.

ԵՐԱՇԽԱՐՀՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՆԴՈՒԹԻՒՆ Է

1 Միլիառ 227 միլիոն Քրանֆ

ՆԵՐԿԱՅԱՅՈՒԹԻՅԻՉ Կ. ՊՈԼՍՈՅ

ԴԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

ԳՐԱՏՈՒՆ Զ. ԹՈՐՈՍԵԱՆ

Չազմագնելաւ, Վալիսէ խան

Բառգիրք Անգլ.-Հայ. Վ. Յ. Յակոբեան, զինքստգոնէ 54, ընտիր լաթիկով 60, ընտիր թղթով 108: Գաւառական կարօտ գալորոցայ զեղէ 30%:

Բառգիրք Հայ-Գաղղ. Ն. Տէմիրճիպաշեան, զրքին ետեւը յատուկ անուանց բառգրքերով. զինքստգոնէ 15, լաթակաղմ 17 1/2: Կարօտ գալորոցայ 30% զեղէ:

Պէտք ունեցողներն ուղղակի գրատուն զիմեյ պարտին:

ՎԱՄՁՈՒ ԳՐԻՆԵՐ

Բաց ի հայ եւ հայատառ Տաճկերէն բաղմամբիւ վէպերէ, դրատան մէջ կը գտնուին Հիւկոյի, Զօլայի, եւ այլ բաղմամբիւ երեսելի հեղինակաց գրքերը, հանդէսներ, ամէն տեսակ գառագրքեր, մանկավարժական պատկերազարդ գրքեր, Ուսուցիչք, ուսուցչութիւն, գրատէրք կը հրաւիրուին այցել եւ օգտուիլ տարիքէն:

Թէ վաճառելի եւ թէ վարձու գրոց պայմանք մատչելի են ամէն քսակի:

Գրատունը բաց է ամէն օր, եւ պատրաստ ամէն ետեւի յանձնարարութիւն կատարելու, եթէ փոխառութիւնը անխիլ է:

[Հաստատեալ յամին 1852]

ՏՔՐ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԱՆ-ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Թ/ւ 396, Մեծ - Փողոց Բերա

(Եանիի Գարեջրատան վրայի յարկը - ճիշդ Զըպուգ-ճեանց դէմ)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենատարեկ յաւած աղաներն մէկ անգամէն կը լեցուն, ցաւով դիմեղ եւ բուժուած վերադառնալու պայմանաւ:

Նորահար եղանակաւ, նաւրը, ճաշակաւոր եւ զիմացիուն արհեստական աղաներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դէմքի ձեւաւորութիւն ըստ տարիքի, ծամողութիւն, եւ ազատ արտասանութիւն երաշխաւորեալ:

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին, ինչպէս նաեւ թմրեցուցիչ զեղերու, եւ ամենախտարեկաւորեալ աքցաններու միջոցաւ առանց ցաւի առամանաւնութիւն:

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ, (մինչեւ կէս օր), ինչպէս նաեւ ամէն օր, (մինչեւ կէս զիշեր) հիւանդ կ'ընդունին Բերայի գործատեղին:

Ա Զ Դ



Այս անգամ կը վաճառուին մեծ ու փոքր քանակութեամբ Ազգ. Հիւանդանոցի սեպհական մաքուա զերձաններն հնարիչ Մեարդապիչի գրատեղեւն օր ի Կ. Պոլսոյ Սաւթթան Համամ Իշխարի-Պըլուխան թիւ 10:

Այս առթիւ կը խնդրուի Ազգայ հասարակութեան օր

փութան փորձել այս զերձաններն Փորձառու եւ մասնագէտ անձինք հաստատած են առաւելութիւնը հրապարակի վրայ գտնուած առաջնակարգ զերձաններէն:

Փորձեցէք եւ անմիջապէս պիտի տեսնէք առաւելութիւնը:

Եւ միանգամայն օգնած պիտի ըլլաք Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի հարկւրաւոր խեղճ եւ անկար պատրաստելոց:

ԸՄԻՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ [ԿԱՆԻՍԻԿ]

Պոլիս եւ Գաւառներ Տրին. 50, Վեցմա 25, Եամա 15 դշ. Օտար երկիրներ » 12, » 6, » 3 ֆր
Դրամի տեղ բոթիայի բուշ ալ կ'ընդունուի Գաւառներէն: Թղթատարի ծախքը մեր վրայ է:

ԾԱՂԻԿԻ ԽՈՒՄԱԳՐՈՒԹԻՒՆ Եւ Վարչութեան վերաբերեալ ամէն գրութիւնք պէտք է ուղղուին Առ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՕԲՄԷՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ ԾԱՂԻԿ ԽՈՒՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Վալաթիա, Նորատունկեան խան

Արտոնատէր Ա. ՕՍԲԱՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԻՊԷՐԵԱՆ

Զիւմպիւլիլ խան միջնայարկ թիւ 18